ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

РОЗА КУРГИНЯН

НЕКОТОРЫЕ ТЕОРЕТИКО-МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ВОПРОСЫ МЕХАНИЗМОВ ПЕРЕДАЧИ ДЕНЕЖНЫХ ПЕРЕВОДОВ

Ключевые слова: *механизм передачи, краткосрочная процентная ставка, денежно-кредитная политика, ставка рефинансирования*

Для осуществления денежно-кредитной политики, центральные банки в странах, должны иметь четкое представление о влиянии политических рычагов. Денежная политика ЦБ Армении основана на стратегическом направлении обьемного регулирования. Для осуществления основной цели Центральный банк Армении (ЦБА) при обеспечении плановых уровней цены, пытается обеспечить последовательный подход к изменению процентных ставок. В статье обсуждались вопросы, связанные с механизмами передачи денежно-кредитной политики, в частности рычагами процентной ставки.

ROZA KURGHINYAN

SOME ISSUES OF THEORETICAL-METHODOLOGICAL MECHANISMS OF TRANSFER MONETARY POLICY OF RA

Key words: *transmission mechanism, short-term interest rate, monetary policy, refinancing rate*

Central banks in the countries, by implementing monetary policy, must have a clear understanding of the leverage of policy. The monetary policy pursued by the Central Bank of Armenia is based on the strategic direction of regulation. The Central Bank of Armenia (CBA) is trying to provide a consistent approach to changes in interest rates for providing of planned levels of price. The article discussed issues related to monetary policy transfer mechanisms, in particular the interest rate levers.

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, դոցենտ, ՀՊՏՀ
ՄԱՐԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ասիստենտ, ՀՊՏՀ

ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՎՐԱ

Հիմնաբառեր. *ներմուծում, մաքսային արժեք, գին, տնտեսություն, մաքսային կարգավորում*

Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվել ցույց տալու ՀՀ-ում ապրանքների մաքսային արժեքի կապը ներքին շուկայում այդ ապրանքների գների հետ: Բանաձևի

օգնությամբ բացահայտվել է, որ մաքսային մարմինների կողմից ուղղիչ գործակիցների կիրառումը հանգեցնում է շուկայում ապրանքների գների բարձրացմանը, որը խոչընդոտում է ազատ շուկայական հարաբերությունների զարգացումը և երկրի մասնակցությունը միջազգային ինտեգրմանը: Նշված խնդիրների լուծման նպատակով առաջարկում ենք մաքսային կարգավորման որոշակի միջոցառումներ, որոնց կիրառումը թույլ կտա արձանագրել դրական արդյունքներ:

ՀՀ-ում, ինչպես և ԱՀԿ անդամ այլ երկրներում, ընդունված է ներմուծվող և արտահանվող ապրանքների մաքսային արժեքը հաշվարկել GATS 7-րդ հոդվածի դրույթներին համապատասխան: Վերջինս ենթադրում է մաքսային արժեքի որոշման 6 մեթոդներ, որոնք կիրառվում են՝ ըստ հաջորդական հերթականության սկզբունքի[1]: Սակայն, ՀՀ-ում բյուջեի եկամտային մասի համալրման նպատակով մաքսային մարմինները հաճախ օգտագործում են մաքսային արժեքի հաշվարկման ուղղիչ գործակիցներ, ներմուծվող ապրանքները մաքսային արժեքի 4-րդ՝ ըստ շուկայում միավորի իրացման գնի մեթոդի հայտարարագրելիս: Դրանք ունեն էական ֆիսկալային ազդեցություն, միաժամանակ, մեծածավալ ապրանքաշրջանառության դեպքում (արտահանում, ներմուծում) ուղղիչ գործակցի շատ փոքր փոփոխությունն անգամ հայտարարատուի համար հանգեցնում է հավելյալ դրամական ծախսերի:

Օրինակ՝ եթե մաքսային արժեքի հաշվարկն իրականացվում է k=1.05 գործակցով, ապա կառաջանա հետևյալ տնտեսական հետևանքը: Շուկայական գինը կազմված է մաքսային արժեքից, փոփոխուն և հաստատուն ծախսերից, ենթադրյալ շահույթից: Փոփոխուն ծախսերն են մաքսատուրքը, ԱԱՀ-ը և այլն: Հաստատուն են վարձակալության, տրանսպորտային և այլ ծախսերը: Եթե նույնիսկ շուկայական գնի փոփոխությունը, գործակից կիրառելու դեպքում, հաշվենք միայն որպես մաքսատուրքի և ԱԱՀ չափի փոփոխության հետևանք, կունենանք հետևյալ պատկերը. շուկայական գինը՝ M-ը, կկազմի.

M = մաքսային արժեք + մաքսատուրքի տոկոսադրույք x մաքսային արժեք + ԱԱՀ տոկոսադրույք x մաքսային արժեք + այլ ծախսեր + շահույթ:

k = 1.05 գործակից կիրառելու դեպքում շուկայական նոր գինը՝ Mk-ն, կկազմի.

Mk = 1.05 x (մաքսային արժեք + մաքսատուրքի տոկոսադրույք x մաքսային արժեք+ ԱԱՀ տոկոսադրույք x մաքսային արժեք) + այլ ծախսեր + շահույթ:

Մաքսային արժեքը նշանակենք v, մաքսատուրքի դրույքաչափը տոկոսներով՝ t, այլ ծախսերը՝ c:

Շահույթը նշանակենք r և ընդունենք, որ այլ ծախսերն ու շահույթն անփոփոխ են.

$$M=(v+tv+0.2v)+c+r \quad (1)$$

$$Mk=k(v+tv+0.2v)+c+r \quad (2)$$

[1] Մաքսային իրավունք, ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար: Սուքիասյան Գ.Ա., Սուքիասյան Ն.Գ.: Եր., հեղ. հրատ., 2016, 470 էջ:

Տեղադրելով k-ի արժեքը բանաձևի մեջ՝ կստանանք.

$$Mk=1.05(v+tv+0.2v)+c+r=1.05v+1.05tv+0.21v+c+r \qquad (3)$$

$$Mk-M=1.05v+1.05tv+0.21v+c+r-v-tv-0.2v-c-r=0.05v+0.05tv+0.01v=0.06v+0.05tv^{1}: \quad (4)$$

Հաշվարկներից ակնհայտ է, որ մաքսային արժեքի փոփոխությունը ցանկացած k>1 գործակցով կբերի շուկայական գնի ավելի մեծ փոփոխության՝ որպես հետևանք թեկուզ հենց միայն մաքսատուրքի և ԱԱՀ չափի փոփոխության: Օրինակ՝ k=1.05 գործակցի դեպքում t=0% մաքսատուրքի դրույքաչափի դեպքում Mk–M=0.06v, այսինքն՝ 5%–ով ավելացնելով մաքսային արժեքը՝ շուկայական գինը կբարձրանա առնվազն 6%–ով՝ սկզբնական հայտարարագրված մաքսային արժեքի նկատմամբ[2]:

Մեր կատարած վերլուծության արդյունքում կարող ենք փաստել.

- եթե ԱԱՀ=0%, մաքսատուրք=0%, ապա մաքսային արժեքը 10%-ով բարձրացնելիս նոր ստացվող արժեքը կբարձրանա 10%-ով,
- եթե ԱԱՀ=20%, մաքսատուրք=0%, ապա մաքսային արժեքը 10%-ով բարձրացնելիս նոր ստացվող արժեքը կբարձրանա 12%-ով,
- եթե ԱԱՀ=20%, մաքսատուրք=10%, ապա մաքսային արժեքը 10%-ով բարձրացնելիս նոր ստացվող արժեքը կբարձրանա 13%-ով:

Սա, իհարկե, տնտեսավարողների համար առաջացնում է լրացուցիչ ֆինանսական ծախսեր, որոնք էլ նրանք հետագայում պիտի ներառեն ապրանքների շուկայական գնի մեջ, և, հետևաբար, շուկայում կունենանք ավելի թանկ վաճառվող ապրանքներ:



Գծապատկեր 1. ***Մաքսային արժեքի փոփոխությունը՝ կախված[3] ուղղիչ գործակիցներից***

Մեր կազմած գծապատկերում (գծապատկեր 1) դիտարկել ենք 3 դեպք, որտեղ թե՛ ներմուծման մաքսատուրքն է հաստատուն՝ 10%, թե՛ ԱԱՀ-ն՝ 20%:

---

[1] Հաշվարկները կատարել է հեղինակը:

[2] Հաշվարկել է հեղինակը:

[3] Գծապատկերը և հաշվարկները կատարել է հեղինակը:

1. Երբ որպես մաքսային արժեք ընդունում ենք հաշիվ-ապրանքագրում ներկայացված, ուղղիչ գործակից չենք կիրառում՝ k=1: Այս դեպքում նոր ստացվող մաքսային արժեքը սկզբնական հայտարարագրվածի նկատմամբ կբարձրանա 1.3 անգամ: Այսինքն՝ 1 միավորը կդառնա 1.3, 2-ը՝ 2.6, 3-ը՝ 3.9, 4-ը՝ 5.2 և այսպես շարունակ:
2. Երբ մաքսային արժեքը որոշվում է 4-րդ մեթոդով, կիրառվում են ուղղիչ գործակիցներ, և որպես ուղղիչ գործակից ընդունենք սկզբնական մաքսային արժեքի նկատմամբ 10%-ով ավելացումը, այսինքն՝ k=1.1: Այս դեպքում նոր ստացվող մաքսային արժեքը սկզբնական հայտարարագրվածի նկատմամբ կբարձրանա 1.43 անգամ: Այսինքն՝ 1 միավորը կդառնա 1.43, 2-ը՝ 2.86, 3-ը՝ 4.29, 4-ը՝ 5.72 և այսպես շարունակ:
3. Երբ մաքսային արժեքը որոշվում է 4-րդ մեթոդով, կիրառվում են ուղղիչ գործակիցներ, և որպես ուղղիչ գործակից ընդունենք սկզբնական մաքսային արժեքի նկատմամբ 20%-ով ավելացումը, այսինքն՝ k=1.2: Այս դեպքում նոր ստացվող մաքսային արժեքը սկզբնական հայտարարագրված արժեքի նկատմամբ կբարձրանա 1.56 անգամ: Այսինքն՝ 1 միավորը կդառնա 1.56, 2-ը՝ 3.12, 3-ը՝ 4.68, 4-ը՝ 6.24 և այսպես շարունակ:

Մաքսային արժեքի փոփոխության ներկայացված 3 դեպքերը համադրելով, կունենանք հետևյալ արդյունքը.

$K = 1$ $t = 10\%$ $c + r = const$ $M_k = v + t\,v + 0.2\,v + c + r =$ $= v + 0.1\,v + 0.2\,v + const =$ $= 1.3\,v + const$	$K_1 = 1.1$ $t = 10\%$ $c + r = const$ $M_{K_1} = 1.1 * 1.3\,v + const =$ $= 1.43\,v + const$	$K_2 = 1.2$ $t = 10\%$ $c + r = const$ $M_{K_2} = 1.2 * 1.3\,v + const =$ $= 1.56\,v + const$



Գծապատկեր 2. ***Մաքսային արժեքի վրա ուղղիչ գործակիցների ազդեցությունը***

Ներկայացված բանաձևի օգնությամբ բացահայտել ենք կապը հսկիչ և շուկայական գների միջև: Այսպես՝ եթե կիրառվի ուղղիչ գործակից մաքսային արժեքի 5%–ի չափով, ապա նոր ստացվող գինը կբարձրանա առնվազն 6%-ով՝ սկզբնական հայտարարագրված մաքսային արժեքի նկատմամբ: Սա այն դեպքում, երբ մաքսատուրքի դրույքաչափը 0% է: Եթե մաքսատուրքի դրույքաչափը 10% է, ապա նոր ստացվող գինը կբարձրանա 6.5%-ով և այսպես շարունակ: Ընդհանրապես, երկրի ՀՆԱ–ում մաքսային եկամուտների բաժինը (զարգացմանը զուգահեռ) աստիճանաբար պետք է նվազի՝ իր տեղը զիջելով ներքին հարկային եկամուտներին: Դա է վկայում զարգացած երկրների փորձի ուսումնասիրումը:

Հետազոտությունից կարող ենք կատարել այն հետևությունը, որ ՀՀ-ում մաքսային կարգավորումը դեռևս իրականացնում է հիմնականում ֆիսկալային գործառույթ, որը, փաստորեն, յուրովի խոչընդոտ է՝ ուղղված ազատ շուկայական հարաբերությունների զարգացմանը և միջազգային ինտեգրմանը մասնակցությանը՝ առաջացնելով հետևյալ բացասական հետևանքները՝

- տնտեսության ոչ արդյունավետ զարգացում,
- ապրանքների շուկայական գների արհեստական բարձրացում,
- սպառողների շահերի անտեսում և այլն[1]:

Անվիճելի է միջազգային առևտրի դերը ցանկացած երկրի տնտեսական զարգացման գործում: Ըստ ամերիկացի հայտնի տնտեսագետ Ջ. Սաքսի՝ աշխարհի յուրաքանչյուր երկրի տնտեսական հաջողություն ամենից առաջ պայմանավորված է արտաքին առևտրի շրջանակների ընդլայնմամբ: Նա ընդգծել է, որ ոչ մի երկրի դեռևս չի հաջողվել ստեղծել կայուն և զարգացած տնտեսություն՝ առանց համաշխարհային տնտեսությանն անդամագրվելու և միջազգային առևտրի ոլորտում իր մասնակցության շրջանակներն ընդլայնելու[2]:

Քանի որ միջազգային առևտուրը մեծ կախվածություն ունի նաև մաքսային կարգավորումից[3], ՀՀ-ի համար ժամանակի հրամայական է դարձել մաքսային կարգավորման ֆիսկալային գործառույթից աստիճանաբար անցումը միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացմանը նպաստող կարգավորող գործառույթին՝ զուգահեռ կիրառելով ներմուծման արտոնյալ մաքսային կարգավորում նոր տեխնոլոգիաների, սարքավորումների և արտադրական գործընթացը կազմակերպելու միջոցների նկատմամբ, և ստեղծել նպաստավոր ներդրումային միջավայր գիտատար և աշխատատար ճյուղերի զարգացման համար: Նշված արդյունքներին հասնելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է՝

1. ՀՀ-ում առկա և շատ հեռանկարային տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրության զարգացմանը, կենսաֆիզիկայի և կենսաքիմիայի նվաճումները դեպի արտադրություն և համաշխարհային շուկա հանելուն ուղղված գիտական և

[1] Եզրահանգումները՝ հեղինակի:
[2] Руденко Л. В., Мировая экономика и Международные экономические отношения, М., “Юрайт”, 2008, 102 с.
[3] Steven M. Suranovic, International trade theory and policy (Chapter 40), Washington, 2015, 330 p.

գիտագործնական միջազգային կենտրոնների ստեղծմանը նպաստող գործընթացներին օժանդակող միջոցառումների իրականացում,

2. պետական համապատասխան լծակների և կառավարության ակտիվ աշխատանքների շնորհիվ՝ կարողանալ միջազգային շուկայում տեղ ապահովել ՀՀ–ում արտադրված մրցունակ և հատկապես ինտելեկտուալ աշխատանքի արդյունք հանդիսացող ապրանքների համար (օր.՝ համակարգչային ծրագրեր),
3. բնակչության կենսամակարդակի բարձրացման և սպառողների շահերի պաշտպանության նպատակով ապրանքների մաքսային արժեքը որոշել հիմնականում գործարքի գնի մեթոդով, որի արդյունքում չեն կիրառվի ուղղիչ գործակիցներ, կթեթևանա տնտեսավարողի հարկային բեռը, և շուկայում կարող է տեղի ունենալ գների կարգավորում, նույնիսկ՝ նվազում,
4. աստիճանաբար հասնել նրան, որ ԱԱՀ-ն ներմուծման դեպքում չգանձվի մաքսային սահմանի վրա, դուրս գա մաքսային եկամուտների մասնաբաժնից և դառնա որպես ներքին հարկ առևտրային գործընթացից, այսինքն՝ հարկ շրջանառությունից (անուղղակի հարկատեսակներ) կամ հարկ շահույթից (ուղղակի հարկատեսակներ), քանզի այն արհեստականորեն նպաստում է ապրանքների գների աճին, ստեղծում է լրացուցիչ ֆինանսական ծախսեր և ազատ դրամական միջոցների կորուստ տնտեսավարողների համար և այդ ձևով ազդում ներմուծումների, ինչպես նաև արտադրական գործունեության կրճատման վրա:

Նման մոտեցումները և միջոցառումները, ինչպես նաև մաքսային կարգավորման՝ վերջին տարիների միտումները ՀՀ-ում աստիճանաբար կնվազեցնեն մաքսային կարգավորման ֆիսկալ գործառույթը, իսկ բյուջեի համալրումը կկատարվի ներքին հարկերի հաշվին, ինչպես ընդունված է համաշխարհային փորձում:

АРМЕН АКОПЯН
МАРЕ ХАЧАТРЯН

ВЛИЯНИЕ ТАМОЖЕННОЙ СТОИМОСТИ НА ЦЕНЫ ТОВАРОВ ВО ВНУТРЕННЕМ РЫНКЕ

Ключевые слова: *импорт, таможенная стоимость, цена, экономика, таможенное регулирование*

В рамках этой статьи сделана попытка показать связь таможенной стоимости товаров с ценами этих товаров на внутреннем рынке в РА. С помощью формулы было установлено, что использование корректирующих коэффициентов таможенными органами приводит к росту цен на товары на рынке, что препятствует развитию свободных рыночных отношений и участию страны в международной интеграции. Для решения этих проблем мы предлагаем определенные меры по таможенному регулированию, применение которых позволит зафиксировать положительные результаты.

ARMEN HAKOBYAN
MARE KHACHATRYAN

THE INFLUENCE OF CUSTOMS VALUE ON THE PRICES OF GOODS IN INTERNAL MARKET

Key Words: *import, customs value, price, economy, customs regulation*

Within this article we tried to show the connection between customs value and prieces of goods in internal market in RA. By using resolution we found out that using corrective coefficients by the customs authorities leads to the rising of prices for goods in the market, which hampers the development of free market relations and the country's participation in international integration. In order to solve these problems, we are proposing certain measures for customs regulation, the application of which will allow to record positive results.

ՄՈՒՇԵՂ ՀԱԿՈԲՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Հիմնաբառեր. *հանրային ծրագիր, կյանքի արժեք, հասարակական նախապատվություն, արդյունավետ բաշխում, բաշխվող կշիռ, սոցիալական արդարություն*

Հոդվածում կատարվել է հանրային ծրագրերի իրականացման ծախսերի ու ակնկալվող արդյունքների համադրություն՝ կարևորելով շուկայական գին չունեցող արդյունքների գնահատման անհրաժեշտությունը: Քննարկվել են ժամանակի արժեքի կյանքի արժեքի, բնական բարիքների արժեքի գնահատման մեթոդները: Հոդվածում կատարվել է նաև հանրային ծրագրերի բաշխման էֆեկտի գնահատումը:

Պետական ծրագրերի վերլուծության ժամանակ կարելի է առանձնացնել երկու կարևորագույն բաժիններ: Առաջին հերթին դա պետական ծախսերի որակական վերլուծությունն է այս կամ այն ուղղությամբ, այդ ծախսերի հնարավոր հետևանքների գնահատումը տնտեսական արդյունավետության և սոցիալական արդարության տեսանկյունից: Երկրորդ, պետական ծրագրերի ծախսերի և օգուտների քանակական վերլուծությունն է:

Պետական ծախսերի ծրագրի որակական վերլուծությունը ներառում է հետևյալ ասպեկտները.[1]

[1] Стиглиц Дж. Ю., Экономика государственного сектора (пер. с англ.). М., Изд-во МГУ, 1997.